

ԳԱՌՆԻԻ ԱՆՏԻԿ ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Ա. Ա. ՍԱՀԻՆՅԱՆ

Դառնիի անտիկ տաճարը կառուցված է ամրոցի եռանկյունաձև տարածքի հարավ-արևելյան բարձունքի վրա՝ Ազատ գետի կիրճի գրեթե եզրին։ Կառուցման ստույգ ժամանակը հայտնի չէ. սակայն շինության ճարտարապետական կառուցողական արվեստի, մատենագրական վկայությունների, հնագիտական ու վիճաբանական նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ այն ստեղծվել է I դարի երկրորդ կեսին։

Տաճարն, ըստ ընդհանուր հորինվածքի, բարձր պատվանդանի (սյուդիումի) վրա դրված պերիստեր է, որի հատակագիծը ներկայացնում է $5,05 \times 7,93$ մետր չափի ուղղանկյուն դահլիճ («ցելլա», «նաոս») նախամուտքով («սյրոնաոս»), որոնք արտաքինից շրջապատված են կարճ ճակատներում՝ վեցական, երկար ճակատներում՝ ութական, այսպես կոչված, հռոմեական-հունական օրդերի սյուներով։

Շենքն ունի հյուսիս-հարավային կողմնորոշում և գլխավոր ճակատով ուղղված է դեպի հյուսիս, ուր և գտնվում է մուտքը։ Գլխավոր ճակատի ամբողջ լայնությամբ 0,30 մետր բարձրության ինը մասսիվ աստիճաններ են, որոնք կառուցվածքին տալիս են հանդիսավորություն և վեհություն։ Աստիճանները երկու կողմից ներփակված են պատվանդաններով, որոնց վրա սյուների ված են մեկ ոտքի վրա ծնկի եկած, ինչ-որ ծանրություն կրելու նպատակով ձեռքերը դեպի վեր պարզած մեկական մերկ ատլանտներ։ Ենթադրվում է, որ պատվանդանների վրա դրված են եղել զոհարաններ։

Տաճարը կառուցված է լավ մշակված տեղական (Գառնիի) կապտավուն որձաքարից. սյուները շարված են շոր, առանց շաղախի. որմնաքարերը ինչպես հորիզոնական, այնպես էլ ուղղաձիգ ուղղությամբ միացված են երկաթե գամերով, որոնց միացման փոսիկները լցված են կապարով։ Սյուների քարերի միացումներում օգտագործված են նաև բրոնզե ուղղաձիգ կապեր։


Հուշարձանը կանգուն վիճակում անացել է մինչև XVII դարը և խորտակվել է 1679-ի երկրաշարժի ժամանակ։ Նրա ավերակներն իրենց վրա են բեվեռել հայրենի և օտարազգի բազմաթիվ մասնագետների ուշադրությունը, որոնց մի մասը ներկայացրել է տաճարի սկզբնական տեսքի վերակազմության նախագիծ։

1830-ական թթ. ֆրանսիացի գիտնական Ֆրեդերիկ Դյուբուա դե Մոնպերենն տվեց Դառնիի տաճարի հատակագծի (պատկերված գրեթե իբրև «անտերով տաճար») և գլխավոր ճակատի սկզբնական տեսքի (բարձր պատվանդանի վրա վեց սյուն՝ պսակված ճակտոնով) վերակազմության առաջին նախագիծը¹։ Ավելի քան երեք բառորդ դար Դառնիի տաճարի նախնական

¹ F. Dubois de Montpèreux Voyage autour du Caucase, chez les Tcherkesses et les Abchases, en Colchide, en Géorgie, en Arménie et en Crimée, III, Paris, 1839, էջ 386—402, առկա, I սեր. աղ. XIX; III սեր. աղ. XXXI.

հորինվածքը ճարտարապետական գիտական մտքին ներկայացված էր Դյուբուայի վերակազմության նախագծով:

1912-ին ակադեմիկոս Ն. Մառի գլխավորած Գառնիի արշավախմբի ճարտարապետ Կ. Ռոմանովը ներկայացրեց տաճարի հատակագծային հորինվածքի («պերիպտեր») և գլխավոր ճակատի (բարձր պատվանդանի վրա վեց սյուն՝ պսակված ճակտոնով) նախնական տեսքը պատկերող վերակազ-



Տաճարի հատակագիծը և գլխավոր ճակատը ըստ Դյուբուայի:

մության իր նախագիծը², որը, ստեղծված լինելով պեղումների շնորհիվ ստացված ճարտարապետական հարուստ նյութի հանգամանորեն ուսումնասիրության հիման վրա, գիտական հիմնավորվածությամբ ու մասնագիտական մշակվածությամբ շահեկանորեն տարբերվում է նախորդ նախագծից:

1933-ին պրոֆ. Ն. Բունիաթյանը, կատարելով տաճարի մնացորդների մանրադնին չափագրություն, կազմեց կառույցի նախնական տեսքի վերափառման արդեն ամբողջական նախագիծ՝ իր բոլոր մանրամասների վերաբարտադրությամբ (հատակագիծ, գլխավոր ճակատ, արևմտյան ճակատ, լայնական կտրվածք, ցելլայի պատերի արտաքին շարվածքի տեսք, առաստաղ, մուտքը՝ իր սանդղակով, օրդերը՝ իր անտաբեկմենտի մասերով և տաճարի մյուս մասերի ու մանրամասների՝ ճակտոն, սյուն, խոյակ, խարիսխ, արխիտրավ, ֆրիզ, քիվ, տեսքն ու չափերը): Նախագիծը կատարված է բացառիկ սիրով, մասնագիտական բարձր մակարդակով: Այն ամբողջությամբ ներկայացված է հեղինակի Գառնիի տաճարին նվիրված արժեքավոր մենագրության մեջ³:


Թե՛ Ռոմանովի և թե՛ Բունիաթյանի նախագծերում սյունաշարքերի միջսյունային հեռավորությունները ներկայացված են միանման, ցելլայի պատե-

² К. К. Романов, Развалины храма римского типа в Баш-Гарни, տե՛ս «Из истории докапиталистических формаций» (сборник статей к сорокалетию научной деятельности Н. Я. Марра), М.—Л., 1933, էջ 653—654, նկ. 1, 2, 3; աղ. I, II, III, IV, V, VI.

³ Ն. Բունիաթյան, Հեթանոսական տաճար Տրդատի պալատին կից Գառնի ամրոցում, Երևան, 1933, էջ 3—14, նկ. 1—56:

րը՝ նույն հաստությամբ, ցելլան՝ առանց սլաշտվող կուռքի խորշի, մուտքի բացվածքը՝ առանց էնտադիսի (դեպի վեր նեղացման), իսկ ցելլայի ծածկը և տաճարի ամբողջ տանիքը՝ փայտակերտ:

Վերջին տասնամյակների հետազոտությունների շնորհիվ ստացված նոր նյութերի հիման վրա տողերիս հեղինակը կազմեց տաճարի սկզբնական տես-



Տաճարի հատակագիծը և գլխավոր ճակատը. վերակառման՝ Կ. Ռոմանովի

քի վերակառման նոր նախագիծ, որով և իրականացվեց տաճարի վերականգնումը:

Վերակառման նոր նախագիծը մշակված է ն. Մառի պեղումների ժամանակ տաճարի սկզբնական կառուցվածքից պահպանված վիճակի, տաճարի շրջապատում թափված բեկորների և տարբեր վայրերից հավաքած մասերի ու մանրամասների ուսումնասիրության հիման վրա:


Առանձին վրիպումներից ու սխալներից խույս տալու նպատակով, ավելի քան երկու տարի զետեղի վրա դասավորվեցին բոլոր բեկորներն ու կոնստրուկտիվ հանգույցներն իրենց սկզբնական կառուցվածքի վիճակով, ապա միայն սկսվեց վերակառման նոր նախագծի մշակումը:

Տաճարի պատվանդանը. ն. Մառի պեղումների ժամանակ տաճարի պատվանդանի սկզբնական կառուցվածքն ըստ էության պահպանվել էր ամբողջությամբ⁴: Միայն անհրաժեշտ էր պարզել պատվանդանի քիվի պահպանված քարերի սկզբնական դասավորությունը, որը քարերի տրամատների և մետաղական կապերի համար արված փորվածքների համադրման միջոցով հնարավոր եղավ ստույգ որոշել:

Տաճարի սկզբնական կառուցվածքի ինը աստիճաններից Մառի պեղումների ժամանակ պահպանվել էին ներքևից հաշված չորս և վերևի աստիճան-

⁴ К. К. Романов, *նշվ. աշխ.*, աղ. II, նկ. 1, 2; К. В. Тревер, *Очерки по истории культуры древней Армении*, М.—Л., 1953, աղ. 15, 16, 17, 18:

ների մի քանի քարեր: Աստիճանների բարձրությունները (թեկուզ և ոչ մեծ չափով) միմյանցից տարբերվում են. նրանց բարձրության և շարքի առանձին քարերի տեղերի ճիշտ որոշման համար գումերից բացի ելակետ դարձան աստիճանները արևմտյան և արևելյան կողմերից երիզող պատերի վրա պահպանված հետքերը: Ուշագրավ է ութերորդ աստիճանի և արևմտյան ատլանտի վրայից ընթացող քիվի միացման հանգույցի քարը, որը բերվեց գերեզմանատնից:



Տաճարի հատակագիծը և գլխավոր ճակատը. վերակազմություն՝ Ն. Բունիաթյանի:

Նրա վրա գտնվող քիվի ելունը (որի շարունակությունը պետք է կազմի ատլանտի քիվի արևելյան ճակատը) հավասար է 0,27 մետրի, իսկ ատլանտի քիվին անմիջապես հարող պատվանդանի արևմտյան քիվի ելունը (որի շարունակությունը պետք է լինի ատլանտի քիվի արևմտյան ճակատը) հավասար է 0,365 մետրի: Համանման տարբերություն գոյություն ունի արևմտյան ատլանտի խարիսխի համապատասխան ելունների չափերի միջև:

Այդ տարբերությունները դիտելով ոչ թե սխալի հետևանք, այլ կուրվատուրային երևույթ՝ մենք, վերակազմության նախագծում, ինչպես արևմրտյան, այնպես էլ արևելյան ատլանտների քիվերն ու խարիսխները վերարտադրեցինք համապատասխանաբար նույն չափերով:

5 Վիտրուվիոսը (I դար. մ. թ. ա.), խոսելով «եվստիլ» տաճարների անկյունային սյուների տրամագիծը մյուս սյուների համեմատությամբ մեծ անհույս անհրաժեշտության մասին, գրում է. «...угловые колонны должно делать толще других на пятидесятую часть их собственного диаметра, ибо они как бы образуются воздухом и смотрящим на них кажутся тоньше. Поэтому ошибку глаза надо исправлять посредством теории». Витрувий, Десять книг об архитектуре, М., 1936, кн. III, гл. 3, էջ 70: Անտարակույս, նույն նպատակով է արված ատլանտի քիվի և խարիսխի արևմտյան և արևելյան ելունների միջև եղած տարբերությունը:

Սյունասրահների հատակը. Ստույգ վերականգնվում է տաճարի արտաքին սյունասրահների սալահատակը և նրա կառուցվածքում տեղ գտած օրինաչափությունը:

Ցելլայի հյուսիսային, հարավային և արևմտյան պատերի խարիսխների տակ պահպանվել են արտաքին սալահատակի սալերի շարունակությունները կազմող բոլոր քարերը, իսկ արևելյան ճակատում՝ ցելլայի արտաքին պատին կից, նրա ամբողջ երկարությամբ սալահատակի առաջին շարքը: Այդ քարերի լայնական և երկայնական ուղղությունները ցույց են տալիս, որ հյուսիսային ճակատի հատակը կազմված է երեք, իսկ արևելյան, արևմտյան և հարավային ճակատների հատակները՝ երկուսական շարքերից: Սալերը երկու շափի են՝ մեծ, որոնք գտնվել են սյուների խարիսխների տակ ու նրանց դիմաց և փոքր, որոնք լրացրել են մեծ սալերի միջև ընկած միջսյունային տարածությունը: Այսպիսով, ստացվում է որոշակի օրինաչափությամբ (մեծ և փոքր սալերի մեկընդմեջ հաջորդականությամբ) ստեղծված ուղղանկյունի ցանց:

Բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում արևմտյան և արևելյան սյունասրահների հատակների կառուցվածքը: Այսպես, արևմտյան սյունասրահի հատակը եթե հյուսիսային եզրում ունի 0,302 մետր բարձրություն, ապա մոտավորապես յուրաքանչյուր մեկ մետրի վրա աստիճանաբար այդ բարձրությունը մեծանալով (0,304; 0,318; 0,331; 0,337; 0,35) սալահատակի կենտրոնում դառնում է 0,364 մետր և ապա դեպի հարավ աստիճանաբար (0,357; 0,333; 0,327; 0,326) պակասելով հարավային ճակատում դառնում 0,30 մետր: Չնչին տարբերությամբ այդպիսին է նաև արևելյան ճակատում:

Վիտրուվիոսը տաճարների արտաքին սյունաշարքերի խարիսխների տեղադրման մասին գրում է, որ դրանք դրվում են պատվանդանի քիվի վերևից ընթացող ստիլոբատի (աստիճանների) վրա և ապա անմիջապես զգուշացնում է, որ եթե ստիլոբատի վերին մակերեսը բերվի ընդհանուր հորիզոնի, ապա աչքին կերևա գոգավոր (ներս ընկած), այդ իսկ պատճառով անհրաժեշտ է այնպես անել, որ ստիլոբատի մեջտեղում լինի հավելում «при помощи нечетных уступов» (per scamilles impares)⁶: Այնուհետև նա հայտնում է, որ այդ «հավելումի» կառուցման եղանակի մասին գրքի վերջում տրվում է հատուկ գծագիր: Ինչպես հայտնի է, գծագիրը չի պահպանվել: Այս իսկ պատճառով Վիտրուվիոսի օգտագործած «per scamilles impares» արտահայտությանը, ինչպես նշում է վերածննդի հեղինակներից Պալլադիոն, տրվել են ամենատարբեր բացատրություններ⁷: Սակայն մի բան կասկածից վեր է համարվել, որ այդ «непарные уступы» «հանդիսանում են ստիլոբատի ուղուցիկ կուրվատուրայի օգնությամբ հորիզոնականների թվացող ճկվածքի կոմպենսացիայի միջոց»⁸:

Նշանակում է, Գառնիում նույնպես ճարտարապետական ձևի հորիզոնական գծին տրվել է հազիվ նշմարելի մեղմ կորություն (կուրվատուրա), որը, կանխելով ճարտարապետական ձևի ընկալման տեսողական աղավաղումը, միաժամանակ այդ ձևին ինչ-որ շափով հաղորդում է նաև պլաստիկ արտահայտչականություն:

⁶ Витрувий, *նշվ. աշխ.*, III, 4:

⁷ А. Палладио, Четыре книги об архитектуре, М., 1936, кн. IV, гл. 28. Տե՛ս նաև Витрувий, *նշվ. աշխ.*, ծանոթագրություններ, էջ 237:

⁸ Նույն տեղում:

Ցելլայի հատակը. ն. Մառի պեղումների ժամանակ պահպանված հատակի սալերը⁹ գրեթե ամբողջությամբ գտնվում էին հողի տարբեր շերտերի վրա և շարվել էին շատ ավելի ուշ ժամանակ: Այդ պատճառով հետագա շրջանի քարերը հեռացվեցին:

Մուտքի սկզբնական հատակը կառուցված է մեկ ամբողջական քարից:

Ցելլայի հատակի վերևի նիշը որոշելու համար ելակետ եղան մուտքի հատակից իննից տասը սանտիմետր ցած գտնվող ելունի և արևելյան պատի առաջին շարքի տակի քարի ելունից տասը սանտիմետր ներքև գտնվող հին սալահատակի հետքերի միևնույն հորիզոնի վրա գտնվող նիշերը, պահպանվեցին սկզբնական քարերի շափերը:

Հին սալաքարերից մեկը մյուսների համեմատությամբ երկար է. նրա մի մասի վերին մակերեսը, ունենալով մյուս սալաքարերի $0,91 \times 0,91$ մետր չափ, տաշված է մաքուր, իսկ մյուս հատվածը՝ կիսամաքուր: Վերջինս ուղիղ գծով անջատվում է մաքուր տաշված մակերեսից, ունի մետաղական ուղղաձիգ ձողի ամրացման խողով և լցվելիք կապարի համար առվակ: Ակնհայտ է, որ այդ քարը գտնվել է հատակի վերջին շարքում, իսկ նրա կիսամաքուր մակերեսի վրա դրված է եղել բնի հարթակի հյուսիսային եզրի համապատասխան սալը:

Հատակը երկայնական ուղղությամբ կազմված է $0,91$ մետր չափի ութ հավասար սալերից, իսկ լայնական ուղղությամբ (շնորհիվ այն բանի, որ ցելլայի երկայնական առանցքի համեմատությամբ մուտքի բացվածքի առանցքը շարժված է դեպի արևելք) սալերի շարքերը ստանում են հետևյալ ուղիղները՝ $0,91 + 0,91 + 1,04 + 0,94 + 0,94$ մետր:

Ցելլայի և սյունասրահների հատակները ստեղծվել են միևնույն սկզբունքով: Ուղղանկյունի սալերով ցանցաձև շարվածք ունեցող հատակների այս ձևը, լայն կիրառում ունենալով հունական ճարտարապետության մեջ (Աթենքում՝ Պարթենոն¹⁰, էրեքթեոն¹¹, Հեփեստեոն¹², Բաստոսում, Ֆիդայիայից ոչ հեռու՝ Ապոլոն էպիկուրի տաճար¹³, Սիցիլիայում՝ Ակրագանտի Դեմետրեի տաճար¹⁴, Թեգեոսում՝ Աթենաս Ալեայի տաճար¹⁵ և այլն), ինչպես և նույն ժամանակաշրջանի փոքրասիական հուշարձաններում (Պրիենեի Աթենաս Պոլիադի սրբավայրը¹⁶ և այլն), տեղ է գտնում նաև հռոմեական կառուցվածքներում (Հռոմում՝ Հուլիոս Կեսարի ֆորումի Վեներայի տաճար¹⁷ և այլն):

Ցելլայի հատակագիծը. Ցելլայի պատերի առաջին շարքը կազմված է երկուական մեծածավալ քարերից: Շարքը հյուսիսային ճակատում ունի $1,115$ մետր բարձրություն, որը դեպի հարավ աստիճանաբար մեծանալով, հարավարևմտյան անկյունում դառնում է $1,185$, իսկ հարավ-արևելյան անկյունում՝

⁹ К. В. Тревер, *взл. арх.*, *мат.* 17, 19, 20.

¹⁰ Н. И. Брунов, Греция, М., 1935, т. 67, *нл.* 36, т. 80, *нл.* 52.

¹¹ *նույն տեղում*, т. 33, *нл.* 28.

¹² «Всеобщая история архитектуры», т. II, М., 1949, кн. I, т. 171, *нл.* 146.

¹³ «Всеобщая история архитектуры», т. II, М., 1973, т. 232, *нл.* 110.

¹⁴ *նույն տեղում*, т. 248, *нл.* 126.

¹⁵ *նույն տեղում*, т. 278, *нл.* 12.

¹⁶ Н. И. Брунов, *взл. арх.*, т. 29, *нл.* 34.

¹⁷ «Всеобщая история архитектуры», т. II, М., 1973, т. 434, *нл.* 18.

1,156 մետր: Այս տարբերությունը հետևանք է այն բանի, որ տաճարի պատվանդանի հարավային հատվածը դեռևս կառուցման ընթացքում նստվածք է թունեցել: Կառուցողները, պահպանելով պատվանդանի սկզբնական բարձրության չափը, ցելլայի պատի առաջին շարքի վերևի եզրը բերել են ընդհանուր հարթաչափի, որի շնորհիվ շարքը տարբեր մասերում համապատասխանաբար ստացել է տարբեր բարձրություններ:

Պատերի հաստության որոշմանը մեծապես նպաստեց ցելլայի հյուսիսարևմտյան հանգույցի երեք ուղղությունները ներկայացնող ամբողջական անդյունաքարը, ըստ որի անտի պատի հաստությունը հավասար է 0,64, հյուսիսային պատինը՝ 0,78, արևմտյան պատինը՝ 0,92 մետրի:

Պահպանվել են շարքի զրեթե բոլոր հին քարերը: Միմյանց հպվելու մակերեսների և մետաղական գամերի հետքերի շնորհիվ ճշտությամբ որոշվեցին յուրաքանչյուրի ստույգ տեղը, հետևապես և բոլոր պատերի առաջին շարքի հաստության չափերը: Հյուսիսային պատի հաստությունը 0,78 մետր է, իսկ մյուսներինը հիմնականում 0,91—0,92 մետր¹⁸: Այսպիսով ստացվեցին ցելլայի հատակագծի ներքին չափերը ($5,05 \times 7,983$ մետր):

Ճշտորեն որոշվում են մուտքի բացվածքի երկու կողմերի պարակալի քարերի և մուտքի հատակի համապատասխան հանգույցների միացման տեղերը: Սակայն պարակալի քարերի ուղղաձիգության ստուգումը և տրամատների ներքևի ու վերևի մասերի տալբեր չափերը ցույց են տալիս, որ թե՛ պարակալը, թե՛ մուտքի բացվածքը դեպի վեր նեղացում (էնտադիս) ունեն: Այս երևույթը որոշակիորեն բարդացնում է մուտքի բացվածքի սկզբնական եզրագծերի ճիշտ վերականգնումը: Վատ են պահպանվել մուտքի հատակի հետ պարակալի քարերի միացման (հպման) մակերեսները, չի պահպանվել նաև պարակալի հորիզոնական հատվածը: Այդ դժվարությունը հաղթահարվում է սանդրիկի քարերի չափերի միջոցով:

Պարակալի ներքևի ծայրի հաստությունը հավասար է 0,455, իսկ պահունակի միացման տեղում՝ 0,417 մետրի: Եթե երկու պահունակների միջև եղած 2,997 մետր չափից հանենք պարակալի երկու կողմի հաստությունը ($0,417 + 0,417 = 0,834$ մետր), կստացվի մուտքի բացվածքի վերևի եզրի իրական չափը՝ $2,997 - 0,834 = 2,163$ մետր: Ճշտելով մուտքի բացվածքի վերևի չափը և պարակալի միմյանց ընդհուպ միացված ուղղաձիգ քարերի դիրքը, դժվար չէ որոշել նաև պարակալի ներքևի քարերի ուղղությունները:

Պարզվում է, որ մուտքի բացվածքի լայնությունը ներքևի եզրում հավասար է 2,29 մետրի, 2,34 մետր բարձրության վրա այն նեղանալով դառնում է 2,255, իսկ վերևի եզրում՝ 2,163 մետր¹⁹, ընդ որում, մուտքի բացվածքի առանցքը ցելլայի երկայնական առանցքի ուղղությունից շարժված է դեպի արևելք:

18 Արևելյան և արևմտյան պատերի մեծ հաստությունը պայմանավորված է նրանց վրա հանգչող քարակերտ թաղի գոյությամբ: Նույն հաստությունն է ընտրվել նաև նրանց կից հարավային պատի համար:

19 Դեպի վեր նեղացում ունի նաև Տիվուլիի (Խտալիա) Վեստայի պաշտամունքի տաճարի (ս. թ. ա. I դար) մուտքը: Մենք հնարավորություն ունեցանք տեղում ծանոթանալ նրա հորինվածքին:

Այսպիսով, լիովին վերականգնվում է մուտքի սկզբնական կառուցվածքը՝ ճշտվում մուտքի բացվածքի տեղը, որով և ամբողջ պարագծով վերարտադրվում է ցելլայի պատերի առաջին շարքի իրական պատկերը:

Ցելլայի պատերի արտաքին ճակատները. ցելլայի պատերի առաջին շարքին հաջորդում է 0,298—0,305 մետր բարձրություն ունեցող գոտին: Այնուհետև պատերի յուրաքանչյուր շարքի լայնական ուղղությամբ դրվում է տվյալ շարքի հաստության չափին համապատասխան 0,42—0,445 մետր բարձրության մեկական ամբողջական քար: Վերին շարքը, որը գտնվում է ցելլայի որմնասյուների խոյակների ուղղության վրա, արտաքինից զարդաքանդակված է: Քանդակագարդ շարքի վերևից ընթանում է սյունաշարքի արխիտրավների ներսի երեսների տրամատների ձևն ու բարձրությունն ունեցող «արխիտրավային» քարերի յուրահատուկ շարք:

Բացառիկ հստակությամբ և ճշտությամբ որոշվում են պատերի բարձրության չափերը: Այսպես. հյուսիսային կողմում հատակից դեպի վեր մուտքի բարձրությունը հավասար է 0,36, մուտքի բացվածքի բարձրությունը՝ 4,685, մուտքի պարակալի հորիզոնական մասի բարձրությունը՝ 0,455, սանդրիկի բարձրությունը՝ 0,592, սանդրիկի վրայից ընթացող սեպածե միացումներով բարավորի բարձրությունը՝ 1,025 մետրի: Հետևապես, պատի ամբողջ բարձրությունը կազմում է՝ $0,36 + 4,685 + 0,455 + 0,592 + 1,025 = 7,117$ մետր:

Բացառությամբ մեկ քարի²⁰, պահպանվել են ցելլայի հարավ-արևմտյան և հարավ-արևելյան անկյունների որմնասյուների ու խոյակների բոլոր քարերը, որոնց շնորհիվ ճշտվում են հարավային ճակատի, արևելյան և արևմտյան ճակատների հարավային եզրերի բարձրության չափերը և այդ ճակատների որմնաշարքերի ուղղությունները: Հարավ-արևմտյան որմնասյան հարավային ճակատում քարերը ներքևից վերև հաջորդաբար ունեն հետևյալ չափերը՝ $0,37 + 1,185 + 0,296^{21} + 0,435 + 0,446 + 0,419 + 0,437 + 0,436 + 0,444 + 0,427 + 0,437 + 0,436 + 0,421 + 0,415 + 0,596$, որոնց ընդհանուր բարձրությունը կազմում է 7,20 մետր: Դրանից պետք է հանել տաճարի հարավային հատվածի վերը հիշատակված նստվածքի հետևանքով հյուսիսային ճակատի առաջին շարքի բարձրության համեմատությամբ հարավային ճակատի արևմտյան եզրի առաջին շարքի բարձրության 7 սանտիմետր հավելյալ չափը, որից հետո պատի ամբողջ բարձրությունը կլինի $7,20 - 0,07 = 7,13$ մետր: Եշանակում է, հյուսիսային ճակատի բարձրության համեմատությամբ տարբերությունը կազմում է ընդամենը 1,3 սանտիմետր:

Նման բարձրություն ունի նաև հարավ-արևելյան անկյան որմնասյունը, որի հարավային ճակատում քարերը ներքևից վերև հաջորդաբար ունեն հետևյալ չափերը՝ $0,38 + 1,156 + 0,296 + 0,435 + 0,425 + 0,44 + 0,455 + 0,444 + 0,435 + 0,425 + 0,428 + 0,438 + 0,423 + 0,415 + 0,588$, որոնց ընդհանուր բարձրությունը կազմում է 7,173 մետր: Այդ չափից պետք է հանել տաճարի հարավային հատվածի նույն նստվածքի հետևանքով, հյուսիսային ճակատի առաջին շարքի բարձրության համեմատությամբ հարավային ճակատի արևելյան անկյան

²⁰ Հարավ-արևելյան որմնասյունից բացակայում է խոյակի տակ գտնվող քարը:

²¹ Գոտու ալս քարը նոր է, նրա չափը վերցրված է գոտու նույն շարքում գտնվող հին քարի չափին հավասար:

առաջին շարքի բարձրության 4,1 սանտիմետր հավելյալ չափը, որից հետո ամբողջ բարձրությունը կլինի $7,173 - 0,041 = 7,132$ մետր: Ինչպես տեսնում ենք, հյուսիսային ճակատի բարձրության համեմատությամբ տարբերությունը կազմում է ընդամենը 1,5 սանտիմետր:

Ցելլայի պատերի արտաքին ճակատների բարձրության ստույգ չափը ստանալուց և այդ պատերի որմնաշարքերի հիմնական ուղղությունները պարզելուց հետո՝ վերակազմության նախագծում ղեկավարվեցին յուրաքանչյուր շարքից պահպանված որմնաքարերի չափերը, իսկ պակասող քարերը լրացվեցին նորերով:

Այսպիսով, սյունասրահների հատակից մինչև առաստաղը ճշտությամբ վերարտադրվեց ցելլայի արտաքին ճակատների սկզբնական տեսքը:

Ցելլայի տաճարական ծավալային ներքին հորինվածքը. Տաճարի շրջապատի բեկորների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ցելլան ունեցել է քարաշեն թաղակապ ծածկ²²: Ցելլայի արևելյան և արևմտյան պատերի վերին որմնաշարքի քարերը դրսի կողմից ունեն սյունաշարքի արխիտրավների տեսքը, իսկ ներսից՝ 0,23—0,27 մետր բարձրության վրա նրանց տրվել է 0,44—0,51 մետր խորությամբ թեք կտրվածք. սրանք էլ հանդիսացել են քարաշեն թաղի առաջին շարքի (կամ, ինչպես ընդունված է ասել, կրունկի) քարերը: Շենքի հարավային և հյուսիսային պատերի վերին շարքերից պահպանված քարերի եզրագծերի կորության հիման վրա ճշտությամբ որոշվում է նաև թաղի ձևը. այն ունի գլանաձև (կիսաշրջանաձև) հորինվածք, որի շառավիղը հավասար է 2,525 մետրի:

Տաճարի հատակի տակ, շենքի երկայնական առանցքի երկարությամբ ստեղծվել է ջրերի հեռացման առվակ: Եթե առվակի մեջ թափված ջուրը քիչ լիներ, կուտակվելով առվակի առավել ցածր նիշ ունեցող հարավային հատվածում, աստիճանաբար կհեռանար հարավային ծայրի խողովակաման անցքով, իսկ եթե լիներ շատ և բարձրանար մինչև առվակի հյուսիսային հատվածում արված հորիզոնական անցքի (ճեղքի) մակարդակը, ապա ճեղքից, 0,92 մետր բարձրությունից ջրվեժի նման թափվելով ցած, կհեռանար հյուսիսային ճակատի համապատասխան անցքով: Ջրերի հեռացման այսպիսի բարդ կառուցվածքի անհրաժեշտությունը առաջացել է ցելլայի թաղակապ ծածկի վերևում գտնված երդիկից անձրևաջրերի մուտք գործելու հետևանքով: Պահպանվել է երդիկի քարերից մեկը, որը լինելով երդիկի երկայնական ուղղության ուղղաձիգ պատի շարքի մեջ, ներքևի մակերեսով միացել է թաղի, վերին մակերեսով՝ երդիկի քիվի քարերին: Երդիկի բացվածքի բարձրության համար ելակետ հանդիսացավ հին քարի 0,46 մետր չափը, իսկ բարձրության մնացած հատվածի համար՝ տաճարի տանիքի լանջերի թեքության ուղղությունը:

V դարի հայ մատենագիրների վկայություններից հայտնի է, որ, մյուս ժողովուրդների հեթանոսական տաճարների նման, հայկական մեհյանները նույնպես ունեցել են պաշտվող աստվածության արձաններ: Այսպես, Խորենացին հայտնում է, որ Վաղարշակը «...Արմավիրում մեհյան շինելով՝ ար-

22 Ա. Ա. Սահյան, Անտիկ դարաշրջանի քարակերտ թաղ Գառնիում, «Պատմա-քանասիրական հանդես», 1976, № 1, էջ 169—186:

ձաններ է կանգնեցնում Արեգակին, Լուսին և իր նախնիքներին»։ Կամ, անդրադառնալով Արտաշես թագավորի (180—160) գործունեությանը, գրում է. «Ասիայում գտնելով Արտեմիդի, Հերակլի և Ասյունի սղնձաձուլ արձանները, բերել է տալիս մեր աշխարհը, որպեսզի կանգնեցնեն Արմավիրում»։

...Հելլադայում էլ վերցնելով Դիոսի, Արտեմիդի, Աթենասի, Հեփեստոսի և Ափրոդիտեի արձանները՝ ուղարկում է Հայաստան»։ Մի փոքր անց, խոսելով Արտաշես I-ի որդու՝ Տիգրանի մասին, պատմիչը հիշատակում է. «Իբրև առաջին գործ՝ նա կամեցավ մեհյանները շինել։ ...Ուլիմպիական Դիոսի արձանը կանգնեցնում է Անիում, Աթենասինը՝ Թիլում, Արտեմիդեի մյուս արձանը՝ Երիզայում և Հեփեստոսինը՝ Բագյաուռիճում։ Բայց Ափրոդիտեի արձանը... հրամայում է կանգնեցնել... Հերակլեսի արձանի մոտ Հաշտից տեղում»²³։

Ազաթանգեղոսը, նկարագրելով քրիստոնեական կրոնի տարածման ժամանակ հայկական մեհյանների ավերումը, հաղորդում է՝ կործանեցին Թուրդան գյուղի Բարշամինայի մեհյանը «...ու նրա արձանը փշրեցին»։ Կամ՝ քանդեցին-ավերեցին Երեզ ավանի Անահիտի մեհյանը ու «...փշրեցին Անահիտ դիցուհու ոսկի արձանը»։ Եվ ապա ընդհանրացնելով հայտնում է. «Այսպես բազում տեղերից վերացրին ձուլված, կոած կոփված, քանդուկված... դայթալըղիչ, անմոռնչ [կուռքերը]...»²⁴։

Նոր ուսումնասիրության նյութերը ցույց տվեցին, որ սլաշտվող աստվածությունների արձան կանգնեցված է եղել նաև Գառնիի տաճարում. այն դրված է եղել ցելլայի ետևի պատի մոտ, բարձր պատվանդանի վրա, ներառված բավական մեծ շափեր ունեցող ուղղանկյուն խորշի մեջ։ Խորշի սկզբնական կառուցվածքից պահպանվել է տասը քար, որոնցից երեքը՝ պատվանդանի արտաքին ճակատներից, մեկը՝ անմիջապես արձանի տակ գտնվող պատվանդանի ներսի քարերից, երեքը՝ արևմտյան, երկուսը՝ արևելյան որմնամույթներից, մեկը՝ խորշի արևելյան ճակատի քիվի և ցելլայի համապատասխան պատի միացման հանգույցից։

Որմնամույթների առաջին շարքի յուրաքանչյուր քարի բարձրությունը հավասար է 0,73 մետրի, որը համապատասխանում է ցելլայի գոտու և նրա վրա գտնվող շարքի բարձրությունների ընդհանուր գումարին ($0,30 + 0,43 = 0,73$)։ Որմնամույթների այդ քարերի արևմտյան և արևելյան ճակատների ներքևի մասում ստեղծված են ճիշտ և ճիշտ ցելլայի գոտու բարձրության ու պատից դուրս եկող խորության շափի ելուններ, որոնք գտնվելով գոտու հորիզոնի վրա, կազմում են նրա օրդանական շարունակությունը²⁵։

Գոտու ներքևի եզրից մինչև ցելլայի հատակը հավասար է 1,215 մետրի, Լթե դրանից հանկնք խորշի առջևի հարթակի 0,32 և խորշի պատվանդանի 0,645 մետր բարձրությունների շափը, կստանանք նաև խորշի խարիսխի բարձրությունը (0,25 մ)։ Քանի որ վերջինիս ձևը անհայտ էր, մենք այն ներկայացրինք պարզ առանց որևէ տրամադրության։

²³ Մ Ո Վ Ս Ե Ս Խ Ո Ր Ե Ն Ա Յ Ի, Հայոց պատմություն, Երևան, 1940, գիրք Բ, գլ. Ը, ԺԲ, ԺԴ։

²⁴ Ա զ ա թ ա ն գ եղ ո ս, Պատմություն հայոց, Երևան, 1977, էջ 122—123։

²⁵ Որմնամույթների այդ քարերը, իրենց շափերով ու ձևով, բացի խորշի տվյալ շարքից, չեն տեղադրվում տաճարի ամբողջ կառուցվածքի և ոչ մի մասում։

Խորշի բացվածքի խորության համար ելակետ հանդիսացավ արևելյան որմնամուկի վերին շարքի որմնաքարի 1,43 մետր երկարության չափը, իսկ լայնության ու բարձրության համար՝ ճակատին արևելյան հանգույցի և ցիլլայի հանդիպակաց պատի միացման տեղում պահպանված որմնաքարը, որի թեք կտրվածք ունեցող խոռոչի մեջ ժամանակին ագուցվել է ճակտոնի տվյալ լանջի համապատասխան սալը: Խորշի բացվածքը գտնվում է ոչ թե ցիլլայի երկայնական առանցքի վրա, այլ մուտքի դիմաց:

Այսպիսով, ամբողջապես վերարտադրվում է ցիլլայի տարածական-ծավալային ներքին հորինվածքը:

Սյունաշարերի սյուների նշահարումը. արևմտյան նակառ. Տաճարի սյունաշարահենքի սալահատակի արտաքին եզրերի քարերից գրեթե ոչ մեկը չի պահպանվել, հետևապես հայտնի չէ սյունաշարքերի և ոչ մի սյան սկզբնական տեղը: Միակ պահպանված մասը ցիլլայի արևմտյան անտի որմնասյան առաջին շարքն է, որի շնորհիվ որոշվում է անտի որմնասյան առանցքների վրա գտնվող արևմտյան և հյուսիսային սյունաշարքերի՝ համապատասխան սյուների առանցքների ուղղությունը:

Այդ իսկ պատճառով սյուների տեղադրումը, նրանց միջսյունային հեռավորությունների որոշումը հնարավոր էր կատարել միայն արխիտրավների չափերի շնորհիվ: Հավաքվեցին տաճարի ավերակների տարբեր մասերում թափված, երկրաշարժի հետևանքով ձորը նետված, ժամանակին տեղական ազդաբնակչության կողմից գերեզմանատուն տարված և իբրև տապանաքար օգտագործված արխիտրավների բոլոր քարերն ու բեկորները: Քսանութ արխիտրավներից, ամբողջական կամ կտրատված մասերը ի մի բերված, պահպանվել են քսանվեցը: Այդ հանգամանքը հնարավորություն ընձեռեց ճշտությամբ վերարտադրել յուրաքանչյուր ճակատի արխիտրավների շարքի սկզբնական պատկերը:

Արևմտյան սյունաշարքից պահպանվել են բոլոր յոթ արխիտրավները, որոնք հյուսիսից հարավ ուղղությամբ ունեն հետևյալ չափերը՝ $1,99 + 2,095 + 2,125 + 2,08 + 2,10 + 2,12 + 1,972 = 14,482$ մետր: Ինչպես տեսնում ենք, անկյունային սյուների վրա դրված արխիտրավները, լինելով միանման չափերի, մյուսների համեմատությամբ ունեն պակաս երկարություն, իսկ մնացած բոլոր արխիտրավները շնչին տարբերությամբ իրար հավասար են:

Արխիտրավների քարերի երկարությունների չափերի մեջ կարող են մի քանի սանտիմետր տարբերություններ լինել, բայց սյուների միջսյունային հեռավորությունները պետք է լինեն հավասար: Այդպես էլ վարվեցինք. ելակետ ընդունելով արխիտրավների երկարության չափերը, նրանց միջև եղած փոքր տարբերությունները (նույն արխիտրավների միացման հանգույցներում) լրացնելով կամ պակասեցնելով, միջսյունային հեռավորությունները ընդունեցինք միմյանց հավասար: Այսպես, եթե հյուսիսային կողմից հաշված երրորդ արխիտրավի 2,125 մետր չափից 5 միլիմետր ավելացնենք նրա հյուսիսային կողմում գտնվող արխիտրավի երկարության չափին և 2 սանտիմետր՝ հարավային կողմի արխիտրավի երկարության չափին, ապա իրար հաջորդող չորս արխիտրավները կունենան միմյանց հավասար՝ 2,10 մետր երկարություն: Նույն չափը կունենա հարավից հաշված երկրորդ արխիտրավի երկարությունը, եթե նրա 2,12 մետր չափից 2 սանտիմետր ավելացնենք հարավային եզրի արխիտրավի երկարության չափին ($1,972 + 0,02 = 1,992$).

մետր): Արխիտորավների այդ երկարություններին համեմատ, արևմտյան ճակատի սյուների առանցքից առանցք եղած հեռավորությունները հյուսիսից հարավ ուղղությամբ ստանում են հետևյալ չափերը՝ $1,99 + 2,10 + 2,10 + 2,10 + 2,10 + 2,10 + 1,992 = 14,482$ մետր²⁶: Ընդ որում, սյունասրահի հյուսիսային անկյան սյուների առանցքների միջև եղած հեռավորությունը (1,99 մետր) չնչին տարբերությամբ հավասար է ցելլայի արևմտյան անտի որմնասյան և նրա հյուսիսային ուղղության վրա գտնվող սյան առանցքների միջև եղած (2,002 մետր) հեռավորությանը²⁷ (տարբերությունը կազմում է 1,2 սանտիմետր), իսկ հարավային անկյան սյուների առանցքների միջև հեռավորությունը (1,992 մետր)՝ ցելլայի հարավ-արևմտյան անկյան որմնասյան ու նրա հարավային ուղղության վրա գտնվող սյան առանցքների միջև եղած (1,975 մետր) հեռավորությանը²⁸ (տարբերությունը կազմում է 1,7 սանտիմետր):

Հյուսիսային ճակատ. Հինգ արխիտորավներից պակասում է արևելյան եզրի արխիտորավը: Եթե արևմտյան և արևելյան ճակատների արխիտորավների հյուսիսային ծայրի առանցքների միջև եղած հեռավորությունից (որը 10,282 մետր է) հանենք պահպանված արխիտորավների երկարության չափը ($2,03 + 2,03 + 2,168 + 2,001 = 8,229$ մետր), կստացվի նաև արևելյան եզրի արխիտորավի երկարությունը՝ $10,282 - 8,229 = 2,053$ մետր: Սակայն չնայած ստացվում են բոլոր արխիտորավների չափերը, բայց դրանց մի մասի երկարությունները չեն արտացոլում համապատասխան սյուների առանցքից առանցք ունեցած հեռավորությունները և ահա թե ինչու:

1. Արևմտյան անտի որմնասյան վրայից դեպի հյուսիս ընթացող արխիտորավը, հյուսիսային ճակատի համապատասխան արխիտորավներին միանալու (հանդիպման) տեղում, անտի երկայնական առանցքի ուղղությունից թեքված է դեպի արևելք 6,2 սանտիմետր:

Որպեսզի այդ թեքումը մեղմանա, նույն արխիտորավի շեղ կտրված գազաթը (որի կենտրոնի մոտ իրար են հպվում հյուսիսային ճակատի արխիտորավները) այնպես է տաշված, որ անտի երկայնական առանցքի ուղղությունից թեքված է դեպի արևելք ընդամենը 3,2 սանտիմետր: Սրա հետևանքով հյուսիսային ճակատի՝ արևմուտքից հաշված առաջին արխիտորավի դրսի երկարությունը նրա արևելյան կողմի արխիտորավի դրսի երկարության հաշվին ավելացել է 3,2 սանտիմետրով: Հետևապես, հյուսիսային սյունաշարքի արևմտյան եզրի միջսյունային հեռավորությանը՝ համապատասխանող արխիտորավի չափը ստանալու համար անհրաժեշտ է նրա երկարության 2,03


26 Բոլոր ճակատներում, սյուների նշահարմանը համապատասխան, որոշակի օրինաչափությամբ են դասավորված նաև սյունասրահների սալահատակի քարերը:

27 Արևմտյան անտի որմնասյան արևմտյան ճակատի առանցքից մինչև որմնասյան հյուսիսային եզրը հավասար է 0,32 մետրի: Այդ եզրից մինչև հյուսիսային սյունաշարքի արևմտյան կողմից հաշված առաջին արխիտորավի հարավային եզրը հավասար է 1,38 մետրի, իսկ վերջինից մինչև տվյալ արխիտորավի առանցքը՝ 0,302 մետրի ($0,32 + 1,38 + 0,302 = 2,002$ մետր):

28 Ցելլայի հարավ-արևմտյան անկյան որմնասյան արևմտյան ճակատի առանցքից մինչև որմնասյան հարավային ճակատի եզրը հավասար է 0,32 մետրի, այդ եզրից մինչև հարավային սյունաշարքի արևմտյան ծայրից հաշված երկրորդ արխիտորավի հյուսիսային եզրը հավասար է 1,345 մետրի, նույն տեղից մինչև տվյալ արխիտորավի առանցքը՝ 0,31 մետրի ($0,32 + 1,345 + 0,31 = 1,975$ մետր):


մետր շափից հանել այդ 3,2 սանտիմետր հաստվածի շափը՝ $2,03 - 0,032 = 1,998$ մետր։ Այս դեպքում հյուսիսային ճակատի՝ արեմուտքից հաշված երկրորդ արխիտրավի երկարությունը կստացվի $2,03 + 0,032 = 2,062$ մետր։

2. Արևելյան անտի որմնասյուն վրայից դեպի հյուսիս ընթացող ար-



Տաճարի արխիտորապետների միացումների համակարգը՝ հավաքված գետնի վրա,
չափազորություն՝ Ա. Սահինյանի:

խիտբավար, հյուսիսային ճակատի համապատասխան արխիտորավներին միա-
նալու (հանդիպման) տեղում, անտի երկայնական առանցքի ուղղությամբ
թեքված է դեպի արևմուտք 7,1 սանտիմետր: Այստեղ նույնպես, որպեսզի այդ
թեքումը հյուսիսային ճակատի համապատասխան արխիտորավների դասավոր-



Տաճարի հաստակագիր ժը. վերականգնությանը՝ Ա. Սուհինյանի:

բության վրա նվաղ անդրադառնա, նույն արխիտրավի ծայրի երկու կողմից շեղ կտրված եռանկյան դադաթը (որի մոտ իրար են հպվում հյուսիսային ճակատի արխիտրավները) այնպես է տաշված, որ անտի երկայնական առանցքի ուղղությամբ թեքված է դեպի արևմուտք միայն 5,5° սանտիմետր: Այդ իսկ պատճառով, հյուսիսային ճակատի՝ արևելքից հաշված առաջին արխիտրավի դրսի երկարությունը նրա արևմտյան կողմի արխիտրավի դրսի երկարության հաշվին ավելացել է 5,5 սանտիմետր: Որպեսզի ստացվի հյուսիսային ճակատի արևելյան եզրի միջսյունային հեռավորությանը համապատասխանող արխիտրավի ստույգ չափը, անհրաժեշտ է նրա երկարության 2,053 մետր չափից հանել այդ 5,5 սանտիմետր հատվածի չափը՝ $2,053 - 0,055 = 1,998$ մետր: Դրա հետևանքով հյուսիսային ճակատի՝ արևելքից հաշված երկրորդ արխիտրավի երկարության չափը կստացվի $2,001 + 0,055 = 2,056$ մետր²⁹:


Ուրեմն, հյուսիսային ճակատի արխիտրավների երկարությունների իրական չափերին համեմատ, հյուսիսային սյունաշարքի միջսյունային հեռավորությունները ստանում են հետևյալ չափերը՝ $1,998 + 2,056 + 2,168 + 2,062 + 1,998 = 10,282$ մետր:

Հաշվալիս նաև, Հինգ արխիտրավներից պակասում է արևմտյան եզրի արխիտրավը: Եթե արևելյան և արևմտյան ճակատների արխիտրավների հարավային ծայրի առանցքների միջև եղած 10,248 մետր չափից հանենք պահանջված չորս արխիտրավների ընդհանուր երկարության ($2,04 + 2,168 + 2,034 + 1,997 = 8,239$ մետր) չափը, կստանանք նաև հինգերորդ արխիտրավի երկարությունը՝ $10,248 - 8,239 = 2,009$ մետր: Հետևապես հարավային ճակատի արխիտրավների չափերն արևելքից արևմուտք կներկայացնեն հետևյալ պատկերը՝ $1,997 + 2,034 + 2,168 + 2,04 + 2,009 = 10,248$ մետր: Այդ չափերն էլ հանդիսանում են հարավային ճակատի սյուների առանցքից առանցք ունեցած հեռավորությունները:

Արևելյան նաև, Անտարակույս, վարպետների տարբեր խմբեր են աշխատել արևմտյան և արևելյան ճակատներում: Արևմտյան ճակատի համեմատությունաբար արևելյան ճակատի թե՛ սյունաշարքի առաստաղի զարդաքանդակման և թե՛ արխիտրավների չափերի որոշման մեջ ակնառու թերություններ կան: Թեև առանձին դեպքերում խիստ կոտրտված, այնուհանդերձ պահպանվել են արևելյան ճակատի բոլոր արխիտրավները. սակայն նրանց երկարության չափերում ($2,05 + 2,033 + 2,20 + 2,01 + 2,09 + 2,10 + 2,03$), ինչպես տեսնում ենք, բացակայում է արևմտյան ճակատի արխիտրավների երկարության չափերի մեջ գոյություն ունեցող որոշակի օրինաչափությունը: Այս իսկ պատճառով, արևելյան ճակատի սյուների նշահարման հաշվումների ժամանակ օգտագործել են նաև հարակից տվյալներ: Այսպես.

29 Անտերի վրայից ընթացող արխիտրավների դեպի նախամուտք թերումը անդրադարձել է նաև նախամուտքի առաստաղի քարերի քանդակազարդ հատվածի չափումներում: Եթե առաստաղի վեց սայերի հարավային եզրի ընդհանուր երկարությունը (6,032 մետր) ընչին տարբերությամբ հավասար է հյուսիսային եզրի ընդհանուր երկարությանը (6,015 մետր), ապա այդ նույն քարերի քանդակազարդ մակերեսի հարավային եզրը հավասար է 5,362, իսկ հյուսիսայինը՝ 5,18 մետրի: Անտերից դեպի հյուսիս ընթացող արխիտրավների հարավային ծայրերի միջև գոյություն ունեցող հեռավորության համեմատությամբ հյուսիսային ծայրերի միջև եղած հեռավորությունը ակնհայտորեն պակասեցված է:

1. Արևելյան սյունաշարի հարավային ծայրի արխիտրավի ներսի կողմից երկարությունը՝ հյուսիսային եզրից մինչև հարավային սյունաշարի հանդիպակաց արխիտրավը, հավասար է 1,71, իսկ հանդիպակաց արխիտրավի հյուսիսային եզրից մինչև նրա առանցքը՝ 0,30 մետրի, հետևապես, ընդհանուր չափը կազմում է $1,71 + 0,30 = 2,01$ մետր:



Տաճարի երկայնական կտրվածքը. վերակազմություն՝ Ա. Սահյանի:

Ճիշտ այդպիսի չափ ունի ցելլայի հարավ-արևելյան որմնասյան արևելյան ճակատի և հարավային սյունաշարի՝ արևելյան կողմից հաշված երկրորդ արխիտրավի առանցքների միջև եղած հեռավորությունը (2,015 մետր)։ տարբերությունը կազմում է 5 միլիմետր:

2. Ցելլայի արևելյան անտի որմնասյան արևելյան ճակատի առանցքից մինչև սալահատակի հյուսիսային եզրը 2,582 մետր է: Եթե այդ չափից հանենք սալահատակի հյուսիսային եզրից մինչև անտի դիմացի համապատասխան սյան առանցքը եղած 0,604 մետր չափը, կստանանք տվյալ սյան և արևելյան անտի որմնասյան արևելյան ճակատի առանցքների միջև եղած հեռավորությունը՝ $2,582 - 0,604 = 1,978$ մետր: Ինականաբար, նույն չափը պետք է ունենա նաև տվյալ սյան և արևելյան անտի որմնասյան արևելյան առանցքների ուղղությամբ ստեղծված՝ արևելյան սյունաշարի համապատասխան սյուների առանցքների միջև գտնվող հեռավորությունը:

Այնուհետև, ամբողջ սյունաշարի արխիտրավների երկարության 14,513 մետր ընդհանուր չափից հանում ենք անկյունային սյուների առանցքների միջև եղած այդ հեռավորությունների ($1,978 + 2,01 = 3,988$ մետր) չափը և ստանում մնացած վեց սյուների առանցքների միջև դրություն ունեցող հեռավորությունը՝ $14,513 - 3,988 = 10,525$ մետր:

Մնացած սյուների առանցքից առանցք հեռավորությունների համար պահպանում ենք միանման չափ՝ $10,525 : 5 = 2,105$ մետր: Ստացվում է ճիշտ այնպիսի պատկեր, որպիսին առկա է արևմտյան ճակատում. մեկ սյան առանցք-

քից մինչև մյուս սյան առանցքը եղած հեռավորության տարբերությունը կազմում է 5 միլիմետր:

Սյուների նման նշահարման հետևանքով արխիտրավները սյուների ուղղաձիգ առանցքների նկատմամբ դասավորվում են հետևյալ կերպ. հյուսիսային ծայրի արխիտրավի երկարության 2,05 մետր չափից հանում ենք առա-



Տաճարի հյուսիս-արևմտյան տեսքը. վերականգնում՝ Ա. Սախնյանի:

ջին և երկրորդ սյուների առանցքների միջև գտնվող 1,978 մետր չափը և ստացված 7,2 սանտիմետր տարբերությունը (որը անցնում է երկրորդ սյան առանցքից դեպի հարավ) միացնում 2,033 մետր երկարություն ունեցող երկրորդ արխիտրավին՝ $0,072 + 2,033 = 2,105$ մետր: Երկրորդ արխիտրավի ծայրը ճշտությամբ համընկնում է երրորդ սյան ուղղաձիգ առանցքին: Հյուսիսից հաշված երրորդ արխիտրավի 2,20 մետր չափից հանում ենք երրորդ և չորրորդ սյուների առանցքների միջև նախատեսվող 2,105 մետր չափը և ստացված 9,5 սանտիմետր տարբերությունը (որն անցնում է չորրորդ սյան առանցքից դեպի հարավ) միացնում չորրորդ արխիտրավի 2,01 մետր երկարությանը՝ $0,095 + 2,01 = 2,105$ մետր: Չորրորդ արխիտրավի հարավային ծայրը ճշտությամբ համընկնում է հինգերորդ սյան առանցքին: 2,09 մետր երկարություն ունեցող հինգերորդ արխիտրավի հյուսիսային ծայրը դրվում է հինգերորդ սյան ուղղաձիգ առանցքի ուղղությամբ, իսկ հարավային ծայրը՝ վեցերորդ սյան ուղղաձիգ առանցքից 1,5 սանտիմետր դեպի հյուսիս: Պակասող 1,5 սանտիմետրը լրացվում է վեցերորդ արխիտրավի երկարության հաշվին՝ $2,09 + 0,015 = 2,105$ մետր, որի հետևանքով վեցերորդ արխիտրավի չափից պահպանվում է $2,10 - 0,015 = 2,085$ մետր: Սյունաշարքի հարավային ծայրի արխիտրավի 2,03 մետր երկարության չափից հանվում է երկու սյուների առանցքների միջև եղած 2,01 մետր չափը և ստացված 2 սանտիմետր տարբերությունը (որը անցնում է հյուսիսից հաշված յոթերորդ սյան առանցքից դեպի հյուսիս)

միացվում վեցերորդ արխիտրավի երկարության չափի մնացորդին՝ $2,085 + 0,02 = 2,105$ մետր:

Հետևապես, արևելյան ճակատի սյուների առանցքների միջև եղած հեռավորությունները հյուսիսից դեպի հարավ ստանում են հետևյալ պատկերը՝ $1,978 + 2,105 + 2,105 + 2,105 + 2,105 + 2,105 + 2,01 = 14,514$ մետր:

Այսպիսով, լիովին վերարտադրվում է տաճարի բոլոր ճակատների սյուների միջսյունային հեռավորությունների իրական պատկերը:

Ինչպես տեսանք, տաճարի մյուս սյուների միջսյունային հեռավորությունների համեմատությամբ հյուսիսային և հարավային ճակատների կենտրոնական սյուների միջսյունային հեռավորությունը մեծ է, իսկ բոլոր ճակատների անկյունային միջսյունային հեռավորությունը՝ ավելի փոքր:

Վիտրովիոսը, ըստ միջսյունային հեռավորությունների, հիշատակում է անտիկ տաճարների հինգ տեսակ (պիկնոստիլ, սիստիլ³⁰, դիաստիլ, արեոստիլ, եվստիլ), ապա, անդրադառնալով եվստիլ տաճարի միջսյունային հեռավորություններին, գրում է. «Առանձին միջսյունային տարածությունները, բացի

մեջտեղինից, հավասար են $2 \frac{1}{4}$ մոդուլի, մեջտեղի սյուների միջսյունային

հեռավորությունը թե՛ առջևի և թե՛ հետևի ճակատում յուրաքանչյուրը հավասար է 3 մոդուլի»³¹: Ապա հայտնում է, որ այն ամենը, ինչ այստեղ ներկայացվեց, վերաբերում է հունիական օրդերով կառուցված տաճարներին»³²:

Ալբերտին, անդրադառնալով Վիտրովիոսի հիշատակած տաճարների կարճ ճակատների միջսյունային հեռավորություններին, գրում է. «Իսկ այն թոփշները—, որոնք սյունաշարքում կլինեն մեջտեղում, անել մի քիչ լայն»³³, իսկ մեկ այլ տեղ նշում է. «Մեջտեղի թոփշը՝ այն, որ ուղիղ դռան դիմաց է, անել մյուսներից լայն»³⁴:

Պալլադին, անտիկ տաճարների սյուների նշահարման մասին գրում է. «Շենքի զլխավոր ճակատում սյուները պետք է լինեն դույզ թվով... որպեսզի մեջտեղում ստացվող միջսյունային հեռավորությունն արվի մյուսներից մի քիչ լայն»³⁵:

Կարճ ճակատների կենտրոնական սյուների միջսյունային հեռավորությունները մյուս սյուների միջսյունային հեռավորությունների համեմատությամբ ավելի մեծ են, ինչպես, օրինակ, Մազնեսիայի (Մևանդրոս գետի վրա, Փոքր Ասիա) Արտեմիսի հունիական ոճի տաճարում (Արտեմիս Լեկոթեայի տաճար), կառուցված մ. թ. ա. II դարում հելլենիզմի խոշորագույն ճարտարապետ և տեսաբան Հերմոգենեսի կողմից³⁶, Հռոմի, հունիական օրդերով ստեղծված, այսպես կոչված, Ֆորտունա Վիրիլիսի տաճարում մ. թ. ա. 41—

30 Գառնին դասվում է «սիստիլ» տիպի տաճարների շարքը:

31 Витрувий, նշվ. աշխ., III, 3, էջ 69:

32 նույն տեղում, IV, «Вступление», էջ 77:

33 Леон Баттиста Альберти, Десять книг о зодчестве, М., 1935, кн. VII, гл. V, էջ 221—222:

34 նույն տեղում:

35 А. Палладио, նշվ. աշխ., I, 13, էջ 25—26:

36 В. Е. Быков, Архитектура эпохи эллинизма (323 г. до н. э.—I в. н. э.), տե՛ս «Всеобщая история архитектуры», т. II, М., 1973, ч. I, гл. 5, էջ 343—344; նկ.—51—54:

38 թթ.³⁷, նիմաուսի (նիմ, Գաղիա) կորնթական օրդեր ունեցող «Maison Corce» կոչվող տաճարում (մ. թ. ա. 20—19 թթ.)³⁸, սիրիական տաճարներից՝ Պալմիրայի կորնթական օրդեր ունեցող Եկլի տաճարում (I դար)³⁹, Բաալբեկի (Հելիոպոլիս) նույն օրդերով ստեղծված Բաքոսի (նախկին Յուպիտերի) տաճարում (II դար)⁴⁰ և Հռոմի ու Հռոմից դուրս գտնվող անտիկ շրջանի բազմաթիվ այլ տաճարներում⁴¹։

Ինչպես տեսնում ենք, ճարտարապետության տեսության թե՛ անտիկ ու վերածննդի հեղինակների հաղորդումներում և թե՛ հիշատակված տարբեր ժամանակաշրջանների (մ. թ. ա. II—մ. թ. II դդ.) հուշարձաններում կարճ ճակատների կենտրոնական սյուների միջսյունային հեռավորությունը մյուսների համեմատությամբ մեծ է, իսկ մնացած բոլոր սյուների միջսյունային հեռավորությունները միմյանց հավասար են։

Այդպես է նաև Գառնիի տաճարում, միայն թե Գառնիում, անշուշտ կոնստրուկտիվ նկատառումով, փոքր են արված բոլոր ճակատների անկյունային միջսյունային հեռավորությունները։

Սյուների բարձրությունները. Պահպանվել են (թեկուզ առանձին դպրեքում խիստ քայքայված) բոլոր խարիսխները, որոնք, ունենալով միմյանցից մի փոքր տարբեր բարձրություններ, վերակազմության նախագծում տեղադրվեցին ցելլայի խարիսխի տարբեր հատվածների բարձրություններին համեմատ։ Պահպանվածության տարբեր վիճակով մեզ են հասել նաև բոլոր խոյակները։ Առանց դժվարության որոշվում են որմնասյուների և անկյունային խոյակների չափերն ու նրանց յուրաքանչյուրի սկզբնական տեղը (միջսյունային խոյակների տեղադրման ելակետը եղան նրանց ու ճարտարապետական համապատասխան մանրամասների վրա պահպանված մետաղական կապերի հետքերը)։

Սյան ներքևի տրամագիծը 0,692 մետր է, որը աստիճանաբար մեծանալով, սյան $\frac{1}{3}$ բարձրության վրա դառնում է 0,704 մետր և հետո, դեպի

վեր նեղացման (էնտադիսի) հետևանքով, աստիճանաբար նվազում (0,61 մետր)։ Իրենց սկզբնական բոլոր մանրամասներով (խարիսխ, բուն, խոյակ) պահպանվել են երկու ամբողջական սյուներ, որոնք տեղադրվեցին պլիսավոր ճակատի սյունաշարքի կենտրոնում։ Այդ սյուները լիովին հաստատում են ցելլայի արտաքին պատերի բարձրությունների չափերի իսկությունը։

37 А. Палладно, *взф. азф.*, IV, 13, էջ 50։ Մենք հնարավորություն ունեցանք հուշարձանի սյուների տեղադրման Պալլադիոյի հիշատակած օրինաչափությանը ծանոթանալ տեղում (Հռոմում)։

38 Նույն տեղում, IV, 28, էջ 112—115։

39 Казимеж Михаловский, Пальмира, Варшава, 1968, էջ 19։ Г. А. Коселенко, Архитектура Римской империи. Храмы, «Всеобщая история архитектуры», т. II, М., 1973, ч. II, гл. 3, էջ 554։

40 Michel Hartz, Baalbek, A Story in Stone, Beirut, 1972, էջ 31, տե՛ս նաև «Всеобщая история архитектуры», т. II, М., 1948, кн. II, էջ 248։

тектуры», т. II, М., 1948, кн. II.

41 А. Палладно, *взф. азф.*, IV, 7—13, 15, 18—20, 24, 25, 27, 30, 31։

Ստույգ հայտնի է օրգերի անտաբլեմենտի բարձրությունը, իսկ նրա առանձին մասերի (արխիտրավ, ֆրիզ, քիվ) տրամատների ու զարդաքանդակների համադրությամբ որոշվում է նաև յուրաքանչյուր բեկորի նախնական տեսքը:

Տափիք. Շնորհիվ ձակտոնների անկյունների ու լանջերի քիվի բոլոր և սիմպանների պատերի զգալի մասի քարերի առկայության, ձակտոնների եռանկյունաձև հորինվածքները նախ ուղղաձիգ վիճակով հավաքվեցին գետնի վրա, ապա նոր վերարտադրվեցին վերականգնության նախագծում:

Ծածկի սալերից (солеп) և կալիպտերներից ոչ մեկը ամբողջական չի պահպանվել, սակայն տեղում գտնված մեծաքանակ բեկորները հնարավորություն ընձեռեցին պարզել նրանց ձևը, միմյանց և տանիքի հետ միացման եղանակը, իսկ քիվերի վրա պահպանված մետաղական կապերի հետքերը՝ նրանց երկարության ու լայնության չափերը ($7,53 \times 0,72$ մ):

Ս. Մառի պեղումների ժամանակ գտնված ականթի տերևով քարի ստույգ նշանակությունը անհայտ էր. մասնագետների մի մասը այն համարում էր ակրոտերիա, մյուսը՝ կասկածում: Վերջին հետազոտությունների ժամանակ գտնվեց նույնպիսի մշակմամբ անկյունային ակրոտերիա, որը վերացրեց տարակուսանքը: Առաջինը՝ ըստ իր ձևի ու չափերի տեղադրվեց գլխավոր ճակատի ձակտոնի զագաթին, երկրորդը՝ նույն ձակտոնի արևմտյան անկյունում:

Այսպիսով, լիովին վերարտադրվեց տաճարի ինչպես հատակագծային, այնպես էլ տարածական-ծավալային սկզբնական (I դարի) հորինվածքը: Նախագիծը 1968-ին հաստատվեց հանրապետության Մինիստրների խորհրդի կողմից և 1969—1975 թթ. իրականացվեց տաճարի վերականգնումը:

НАУЧНЫЕ ОСНОВЫ РЕКОНСТРУКЦИИ АНТИЧНОГО ХРАМА В ГАРНИ

Засл. деятель искусств АрмССР А. А. САИНЯН

(Резюме)

Храм по своей общей композиции является периптером, поставленным на высоком подиуме. В плане это прямоугольный зал (наос) размером $5,05 \times 7,983$ м с образованной продолжением продольных стен северной стороны передней (пронаос); стены снаружи окружены на коротких фасадах шестью, а на длинных—восемью колоннами римско-ионического ордера. Храм создан во второй половине I в. н. э. (после 66 г.) и был разрушен сильным землетрясением 1679 г. Развалины храма привлекали к себе внимание многочисленных исследователей, как отечественных, так и иностранных.

В 1834 г. Дюбуа де Монпере составил в самых общих чертах проект реконструкции храма: план (без боковых колоннад) и первоначальный вид главного фасада (высокий подий, над ним шесть колонн, завершающихся фронтоном). Спустя столетие появились проекты реконструкции К. К. Романова (1912 г.), архитектора экспедиции Марра, и Н. Г. Буниатяна (1933 г.). Проект Романова, где представлен план («периптер») и главный фасад (высокий подий, шесть ко-

լոն, венчающихся фронтоном), своим профессионализмом выгодно отличается от предыдущего. Полный проект со всеми подробностями составил Буниятян. Обмеры и составление этого проекта сопровождались многосторонними теоретическими исследованиями.

В 1968 г. нами был составлен новый проект реконструкции. Параллельно с исследовательской работой были собраны на земле все конструктивные узловые части памятника в первоначальном виде. Как в плановой, так и в объемно-пространственной композиции (толщина стен целлы, каменный свод, «ердик», ниша почитаемого божества, энтазис отверстия входа, междуколонный промежуток, пропорции колоннад, размещение и вид акротерия, строительный принцип отдельных частей) новый проект значительно отличается от предыдущих. Проект утвержден Советом Министров республики и осуществлен в натуре под руководством автора в 1969—1975 гг.